Ուղղությունը. Ֆինանսներ, բակալավրիատ, առկա ուսուցում

Առարկա. Ֆինանսական հաշվառում

Անոտացիա

Աշխատատարությունը՝ *4 կրեդիտ, 144 ակադեմիական ժամ*

Քննություն

Համառոտ նկարագրություն. «Ֆինանսական հաշվառում» դասընթացի ուսումնասիրման առարկան է միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվողականության կազմման տեսությունն ու պրակտիկան: Դասընթացի խնդիրն է ուսանողների մոտ տեսական և գործնական գիտելիքների ձևավորումը ֆինանսական հաշվառման ոլորտում:

Խորհուրդ է տրվում դասընթացի ուսումնասիրման հետևյալ հաջորդականությունը՝ ծանոթանալ դասընթացի ծրագրին, մշակել ուսումնական նյութն ըստ դասագրքերի և դասախոսությունների, ամսագրերում հրատարակությունների, գրականության, նորմատիվ փաստաթղթերի, հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Գիտելիքների խորացման և ամրապնդման պարտադիր պայման է ուսանողների մասնակցությունը գործնական պարապմունքներին, ինչպես նաև տիպային խնդիրների, թեստերի լուծումը, և հիմնական ֆինանսական հաշվետվությունների կազմումը:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. «Հաշվապահական հաշվառում և վերլուծություն» դասընթացը սերտորեն կապված է «Տնտեսագիտություն» դասընթացի հետևյալ առարկաների հետ՝ «Միկրոտնտեսագիտություն», «Ֆինանսական հաշվառում» և այլն: